ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1808

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 2-3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Ռաֆիկի Մանուսաջյանի լիազորված անձ Ալեն Արթուրի Եգանյանի 28.09.2026 թվականի թիվ 02/15113 դիմումը, 14.09.2026 թվականին տրված լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26112025-06-0011 վկայականը, 24.09.2026 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-24092026-06-0138 որոշումը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1.Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց 2-3/1 հասցեում գտնվող 0.0963 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1809

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 4 ՇԵՆՔ, 31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՌԻՓՍԻՄԵ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ, ՆԱԻՐԱ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հռիփսիմե Աշոտի Սիմոնյանի 06.10.2026 թվականի թիվ 02/15755 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26052026-06-0015 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Հռիփսիմե Աշոտի Սիմոնյանին, Նաիրա Աշոտի Սիմոնյանին և Արմինե Աշոտի Սիմոնյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հ. Ներսիսյան փողոց 1-ին փակուղի 4 շենք, 31 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Հ. Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 4 շենք, 31 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1810

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՀՈՒԼԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1326 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիկտորիյա Արթուրի Գրիգորյանի դիմումը, 15 հուլիսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1326 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 17.09.2026 թվականին տրամադրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-17092026-06-0287 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 15 հուլիսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 84 շենքի ծավալից դուրս, շենքի սպասարկման գոտում թիվ 30 բնակարանին կից ինքնակամ կառուցված բնակարանը, բնակարանում կատարված ինքնակամ ձևափոխումներն օրինականացնելու մասին» թիվ 1326 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետում «և բնակարանում կատարված թվով 1 ինքնակամ ձևափոխումները» բառերը փոխարինել «և բնակարանում կատարված թվով 2 ինքնակամ ձևափոխումները» բառերով:

2. Որոշման 2-րդ կետում «թվով 1 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն)» բառերը փոխարինել «թվով 2 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 3940 (երեք հազար ինը հարյուր քառասուն)» բառերով:

3. Օրինականացման համար սահմանված վճարի տարբերությունը՝ 1970 ((3940-1970) (հազար ինը հարյուր յոթանասուն)) դրամ գումարը Ակոբ Ժորայի Գրիգորյանի կոմից 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1811

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1571 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչ Խաչիկի Զոհրանյանի լիազորված անձ՝ Տարոն Արտուրի Վարդանյանի 09.09.2026 թվականի թիվ 02/14058 դիմումը, 05.08.2025 թվականի թիվ 4033 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը: 843-20250805-90-9259908), 25 օգոստոսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1571 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 25 օգոստոսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք նրբանցք թիվ 5 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Հրաչ Խաչիկի Զոհրաբյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1571 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրում, նախաբանում, «1»-ին և «2»-րդ կետերում «գյուղ Գուգարք» բառերը փոխարինել «Վանաձոր քաղաք» բառերով:

2. Որոշման վերնագրում, նախաբանում, «1»-ին և «2»-րդ կետերում «Զոհրաբյանի» բառը փոխարինել «Զոհրանյան» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1812

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ (ՆԱԽԿԻՆ ՍՎԵՐԴԼՈՎ) 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՎԻԿ ՅՈՒՐԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովիկ Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 10.10.1958թ.) 10.02.2026 թվականի թիվ 02/1773 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 24.01.1988 թվականի տեխնիկական անձնագիրը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 09.03.2026թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2026GBPXES), 10.04.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-65/26 Ի եզրակացությունը, 08.12.2024 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 653 (նոտարական ակտի կոդ:741-20220608-84-5973562) վկայագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլով) 4-րդ փակուղի թիվ 4հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 173.0քմ մակերեսով և կից 294.0քմ հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-2024թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 935.0քմ, որը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ Հովիկ Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 10.10.1958թ.)և Շաքար Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 17.02.1957թ.) տնատիրությունների միջև՝ Հովիկ Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 10.10.1958թ.) մասը կազմում է (0.0935:2) 0.04675հա:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հովիկ Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 10.10.1958թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին

Սվերդլով) 4-րդ փակուղի թիվ 4 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 173.0քմ մակերեսով և կից 294.0քմ հողամասերի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ, բացառությամբ 2024 թվականին կառուցված 9.90քմ մակերեսով անասնաշենքի, 2020 թվականին կառուցված 6.30քմ մակերեսով բնակելի տան և 2005 թվականին կառուցված 6.0քմ մակերեսով սանհանգույցի համաձայն՝ «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

Հողամասի մակերեսը փաստացի կազմում է 935.0քմ, որը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ Հովիկ Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 10.10.1958թ.) և Շաքար Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 17.02.1957թ.) տնատիրությունների միջև՝ Հովիկ Յուրիկի Մելիքյանի (ծնված՝ 10.10.1958թ.) մասը կազմում է (0.0935:2) 0.04675հա:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 47/15 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1813

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺՈՐԱ ՏՐԴԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Տրդատի Պետրոսյանի 10.09.2026 թվականի թիվ 02/14114 դիմումը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25012017-06-0017 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 07.09.2026թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026TZDUTP, 2026NFJF8E) ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Պարոնյան փողոց 18 հասցեում գտնվող Ժորա Տրդատի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Պարոնյան փողոց 18 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 113.44քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Պարոնյան փողոց, 18/1 բնակելի տուն:

բ. 190.09քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Պարոնյան փողոց, 18 բնակելի տուն:

0.03028հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրին 1/2 մաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1814

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈԴԱՐԻԿ ԹՈՐԳՈՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոդարիկ Թորգոմի Հովհաննիսյանի (ծնված՝ 29.11.1941թ.) լիազորված անձ՝ Վարդան Վահեի Հովհաննիսյանի դիմումը, 07.09.2026 թվականի թիվ 2241 լիազորագիրը /նոտարական ակտի կոդ:494-20260907-90-10512369/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 14.09.2026թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-235/26 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, 14.09.2026թ. թիվ 5411 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 741-20260914-66-10540159), 14.09.2026թ. թիվ 5423 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 741-20260914-66-10540883) և 14.09.2026թ. թիվ 5434 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 741-20260914-66-10540918) հայտարարությունը, բաժանորդի էպիկրիզը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի ՈՒսանողական փողոց թիվ 25 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 360.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1995թ.-ին և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 360.0քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1995թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Նոդարիկ Թորգոմի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի ՈՒսանողական փողոց թիվ 25 (պայմանական) հասցեում

կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 360.0քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ :

2. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի ՈՒսանողական փողոց թիվ 25 (պայմանական) հասցեում գտնվող 360.0քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի: Հողամասի սահմանները որոշվում են՝ «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի ՈՒսանողական փողոց թիվ 25 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., ՈՒսանողական փողոց թիվ 13 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1815

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒՇԱՆ ՎԻԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուշան Վիգենի Հարությունյանի (ծնված՝ 17.10.1972թ.) 29.05.2026թ. թիվ 02/8214 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 15.06.2026 թվականի թիվ 2985 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 594-20260615-66-10193094), թիվ 2984 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 594-20260615-66-10193032), թիվ 2983 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 594-20260615-66-10193062), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.08.2026թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-218/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.03980 հա մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1998թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.03980 հա:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ռուշան Վիգենի Հարությունյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ

0.03980 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, 0.020318 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի, 0.019194 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի, 0.000288 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի :

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Գուգարք, 1-ին փողոց, 26/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1816

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1621 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Ռադիկի Մարտիրոսյանի (ծնված՝ 01.01.1974թ.) 06.10.2026թ. թիվ 02/15702 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 1621 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 17.09.2026 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-17092026-06-0005 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ՝

որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 07 սեպտեմբերի 2026 թվականի «Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (հողամասի ծածկագիր՝ 06-084-0731-0002) գտնվող Արևլույս Եպոնի Մարտիրոսյանին և Արտակ Ռադիկի Մարտիրոսյանին վարձակալության իրավունքով պատկանող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները ուղղելու և Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին համապատասխանեցնելու մասին» թիվ 1621 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշման վերնագիրը «ուղղելու,» բառից հետո, լրացնել «,փոստային հասցե տրամադրելու» բառերով:

2. Որոշման նախաբանը «վկայագրերը,» բառից հետո լրացնել «անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,» բառերով, «ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով,» բառերով:

3. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.
«3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 2-րդ փողոց, 28/2 հողամաս:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1817

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 67-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՍԱՇԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Սաշիկի Մարտիրոսյանի 01.10.2026 թվականի թիվ 02/15501 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22062026-06-0039 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը և եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ս. Աբովյան փողոց 67-1 հասցեում գտնվող Արթուր Սաշիկի Մարտիրոսյանին սեփականության, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ս. Աբովյան փողոց 67-1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.03771հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 191.35քմ մակերեսով բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, 67/1 բնակելի տուն:

բ. 0.01458հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, 67/2 հողամաս:

0.01458հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր համատեղ սեփականություն երկու տնատիրությունների միջև, որից Արթուր Սաշիկի Մարտիրոսյանին պատկանող մասը կազմում է 0.00729հա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1818

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-4 ԹԱՂԱՄԱՍ 52/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարուժան Սարիբեկի Քալաշյանի 22.11.2023թ. թիվ 02/20573 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02102026-06-0071 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 13.մայիսի 2026 թվականի թիվ 948 որոշումը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 (կետ՝ 204) որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-4 թաղամաս 52/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 25.88քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 24.94քմ) ավտոտնակի համար 50960 (հիսուն հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 25.9քմ մակերեսով հողամասը 115050 (հարյուր տասնհինգ հազար հիսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վարուժան Սարիբեկի Քալաշյանին:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Վարուժան Սարիբեկի Քալաշյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԹԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1819

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 9Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐՏՈՒՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԼՅՈՒԴՎԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտուն Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 28.02.1961թ.) և Լյուդվիկ Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 06.12.1974թ.) 19.06.2026 թվականի թիվ 02/9285 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 29.04.2026 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2270 վկայագիրը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260428-84-10039513), 29.04.2026 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2271 վկայագիրը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260428-84-10039637), 1989 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 17.06.2026 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026CSPLPE), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 19.06.2026 թվականին «ԱԼԵՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 68/26 եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 2-րդ փակուղի թիվ 9ա հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 254.4քմ և նրան կից 46.3քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1952-1990թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 300.7քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Մարտուն Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 28.02.1961թ.) (1/2) և Լյուդվիկ Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 06.12.1974թ.) (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 2-րդ փակուղի թիվ 9ա հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 254.4քմ մակերեսով հողամասին կից 46.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Մարտուն Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 28.02.1961թ.) (1/2) և Լյուդվիկ Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 06.12.1974թ.) (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 2-րդ փակուղի թիվ 9ա հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 300.7քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, 2-րդ փակուղի, 7/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1820

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԿ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Սամվելի Սահակյանի 07.08.2026 թվականի թիվ 02/12152 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 2224238 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 06.08.2026թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20264TTUME), «Միեր Գևորգյան» ԱՁ-Ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 16.09.2026 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ-242/26 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 30 հասցեում գտնվող սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 61.2 քմ արտաքին մակերեսով (56.1 քմ ներքին մակերես) բնակելի նշանակության շինությունը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Արտակ Սամվելի Սահակյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 61.2 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 166770 (հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 1821

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0094-0019) 6-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՉԻԿ ՍԻՄԱԿԻ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչիկ Սիմակի Բուլղադարյանի (ծնված՝ 15.07.1988թ.) լիազորված անձ՝ Վահրամ Սիմակի Բուլղադարյանի (ծնված՝ 01.03.1987թ.), 11.08.2026թ. թիվ 02/12325 դիմումը, 12.05.1993թ. տրված սեփականության վկայագիրը, 13.10.2025թ. տրված թիվ 7124 (նոտարական ակտի կոդ՝ 763-20251013-90-9477230) լիազորագիրը, 24.06.2026թ. տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 3932 (նոտարական ակտի կոդ՝ 763-20260622-84-10217115) և թիվ 3933 (նոտարական ակտի կոդ՝ 763-20260623-84-10220125) վկայագրերը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 02.10.2026թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-254/26 Ի եզրակացությունը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի (ծածկագիր՝ 06-084-0094-0019) 6-րդ փողոց թիվ 9 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1100.0քմ և դրան կից 127.2քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1990թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1227.2քմ :

Ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Խաչիկ Սիմակի Բուլղադարյանի (ծնված՝ 15.07.1988թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի (ծածկագիր՝ 06-084-0094-0019) 6-րդ փողոց թիվ

9 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1100.0քմ մակերեսով հողամասին կից 127.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Խաչիկ Սիմակի Բուլղադարյանի (ծնված՝ 15.07.1988թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը, Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի (ծածկագիր՝ 06-084-0094-0019) 6-րդ փողոց թիվ 9 (պայմանական) հասցեում, կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 1227.2քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի ճշտված սահմանները որոշվում են համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 6-րդ փողոց, 3-րդ փակուղի, 1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1822

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 60/1Թ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբիկ Գարեգնի Աշուղյանի 08.10.2026 թվականի թիվ 02/15866 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1869460 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մոսկովյան փող թիվ 60/1թ հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մոսկովյան փողոց, 29/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1823

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԻ ԹԱՂ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերուժան Հարությունի Սուքիասյանի (ծնված՝ 28.02.1956թ.) դիմումը, 18.09.2026 թվականի թիվ 5595 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 741-20260918-88-10565403), 18.09.2026 թվականի թիվ 5613 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 741-20260918-88-10567177), 18.09.2026 թվականի թիվ 5612 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 741-20260918-88-10567161), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 07.10.2026թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-255/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սարի թաղ 3-րդ փողոց թիվ 5 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 398.5քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1991թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 398.5քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մերուժան Հարությունի Սուքիասյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Սարի թաղ 3-րդ փողոց թիվ 5 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 398.5քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2.Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Սարի թաղ 3-րդ փողոց թիվ 5 (պայմանական) հասցեում գտնվող 0.03985հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Սարի թաղի 3-րդ փողոց, 5 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1824

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1547 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Գևորգի Պողոսյանի 24.08.2026 թվականի թիվ 02/12973 դիմումը, 20 օգոստոսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1547 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 20 օգոստոսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Բաղրամյան պողոտա 51/1 հողամաս հասցեում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին համապատասխանեցնելու մասին» թիվ 1547 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման 1-ին կետում «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումիի փողոցի 28դ» բառերը փոխարինել «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Բաղրամյան պողոտա 51/1 հողամաս» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1825

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0034-0008) ԳՏՆՎՈՂ ՆԱՐԵԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱՆԿՈՒՂԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Գուրգենի Սիմոնյանի (ծնված՝ 21.12.1990թ.) 08.10.2026թ. թիվ 02/15896 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1718372 վկայականը, 08.10.2026թ. տրված անշարժ գույքի՝ հողամասի առուվաճառքի թիվ 2699 (նոտարական ակտի կոդ՝ 494-20261008-2-10638886) պայմանագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր՝ 06-084-0034-0008) գտնվող, Նարեկ Գուրգենի Սիմոնյանին (ծնված՝ 21.12.1990թ.) սեփականության իրավունքով պատկանող, կիսանկուղին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 6 կիսանկուղ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1826

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 111-1/25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐԻ «ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԿՈՆՑԵՌՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի «ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արամ Յուրայի Առաքելյանի 29.09.2026 թվականի թիվ 02/15298 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23072019-06-0068 վկայականը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 111-1/25 հասցեում գտնվող Վանաձորի «ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 111-1/25 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.43287հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 1743.1քմ ընդհանուր մակերեսով արտադրական նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տ. Չուխաջյան փողոց, 2/3 արտադրամաս:

բ. 0.11407հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 349.93քմ ընդհանուր մակերեսով արտադրական նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տ. Չուխաջյան փողոց, 2/4 պահեստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1827

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1164 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Ռուդիկի Աղամիրյանի 24.09.2026 թվականի թիվ 01/14956 դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 07/07/2026 թ. գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքի /սահմանափակումների/ վերաբերյալ թիվ ԱՏ-07072026-06-0947 տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունիսի 2026 թվականի «Վանաձոր համայնք քաղաք Վանաձոր Տարոն-4 թաղամաս Մեքենաշինարարների 58/4-1 հասցեում գտնվող հողամասի ճշտված սահմանները հաստատելու մասին» թիվ 1164 որոշումը:

2. Արմինե Ռուդիկի Աղամիրյանի կողմից հողամասի սահմանների ճշտման համար վճարված գումարը՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամը վերադարձնել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի՝ 24100732536800 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1828

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌՈՄԱՆ ՕԼԵԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԵՐԿԱՍԻԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոման Օլեգի Աղաջանյանի լիազորված անձ՝ Ռուսլան Օլեգի Աղաջանյանի 08.09.2026 թվականի թիվ 02/14013 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 25122025-06-0083 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ռոման Օլեգի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող Չերկասիի փողոց թիվ 7 շենք, 4 հասցեում գտնվող 51.46քմ մակերեսով բնակելի նշանակության տարածքի օգտագործման նպատակը խանութից՝ բնակարան:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսությունները և համատիրությունները համակարգող բաժնին՝ սույն որոշման մեջ նշված գույքն ընդգրկել բնակարանային ֆոնդում:

3. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1829

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ 62 ՇԵՆՔ, 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՀԵՐ ԳԱԳԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ ԱՎԱԳԻ ՔՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մհեր Գագիկի Սարգսյանի 28.09.2026 թվականի թիվ 02/15121 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15092026-06-0012 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մհեր Գագիկի Սարգսյանին և Մարգարիտ Ավագի Քոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Տարոն-4 թաղամաս 62 շենք, 2 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 62 շենք, 2 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1830

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 3/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՄՍՈՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամսոն Սամվելի Մարգարյանի 12.10.2026 թվականի թիվ 02/16074 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09072025-06-0044 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, 10.10.2026 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2026SMBNQJ, 2026N3GZQU), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 4-րդ նրբանցք 3/5 հասցեում գտնվող Սամսոն Սամվելի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 4-րդ նրբանցք 3/5 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.013713հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 4-րդ նրբանցք, 3/5 հողամաս:

բ. 0.004987հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 4-րդ նրբանցք, 3/6 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 1831

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 7-9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԵԿ ՆԻԿՈԼԱՅԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1986 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

71241200	Վանաձոր համայնքի Սունդուկյան հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1850000	1	1850,00
71241200	Վանաձոր համայնքի Ռաֆֆու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1650000	1	1650,00
71241200	Վանաձոր համայնքի Աճառյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	950000	1	950,00
71241200	Վանաձոր համայնքի Կնունյանց փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2450000	1	2450,00
Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ						**10100,00**
71241200	Վանաձոր համայնքի Ֆիդայինների փողոցի մի հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2500000	1	2500,00

71241200	Վանաձոր համայնքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	400000	1	400,00
71241200	Վանաձոր համայնքի Տիգրանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	600000	1	600,00
71241200	Վանաձոր համայնքի Նալբանդյան փողոց /Զորյանից վերև/ և Նալբանդյան փողոց 2-րդ նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	900000	1	900,00
71241200	Վանաձոր համայնքի Թևոսյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	4000000	1	4000,00
71241200	Վանաձոր համայնքի Կոմիտաս փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	500000	1	500,00
71241200	Վանաձոր համայնքի Իսրայել Օրու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	500000	1	500,00
71241200	Վանաձոր համայնքի Մ. Մելքոնյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	700000	1	700,00
71351380	Վանաձոր համայնքի շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի ուսումնասիրության սեյսմիկ գնահատման և եզրակացության տրամադրման ծառայություններ	ԳՀ	դրամ	15000000	1	15000,00

71351380	Վանաձոր համայնքի շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի ուսումնասիրության սեյսմիկ գնահատման և եզրակացության տրամադրման ծառայություններ	ԳՀ	դրամ	15000000	1	15000,00
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ					
71241200	Վանաձոր համայնքի Ղ. Աղայան փողոցի սկզբնամասի և ջրահեռացման համակարգի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2000000	1	2000,00
71241200	Վանաձոր համայնքի Հակոբյան փողոցի մի մասի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1850000	1	1850,00
71241200	Վանաձոր համայնքի Քիմիագործների 2-րդ փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1500000	1	1500,00
71241200	Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1100000	1	1100,00
71241200	Վանաձոր համայնքի Պարույր Սևակ փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1800000	1	1800,00
71241200	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	5120000	1	5120,00
71241200	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	6000000	1	6000,00
						19370,00

	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված -5134/					
71241200	Վանաձորի համայնքի Խուդյակովի փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2000000	1	2000,00
71241200	Վանաձորի համայնքի Տարոն-4 թաղամասի ներհամայնքային փողոցների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	5000000	1	5000,00
71241200	Վանաձոր համայնքի Գործարանային փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	3400000	1	3400,00
71241200	Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2000000	1	2000,00
71241200	Վանաձոր համայնքի Հակոբյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1500000	1	1500,00
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված -5112/					
71241200	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման	ԳՀ	դրամ	3000000	1	3000.0
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված -5134/					

71241200	Վանաձոր համայնքի մի շարք շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	8 000 000	1	8000.0
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված -5134/					
71241200	Վանաձոր համայնքի մի շարք շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1 000 000	1	1000.0
	Բաժին-06 խումբ-6 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)					
Կոմունալ ծառայություններ/հոդված 4213/						
45111240	Վանաձոր համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների ապամոնտաժման աշխատանքներ	ԳՀ	դրամ	9953880	1	9953,88
Աշխատանքներ/հոդված 5112/						
45221142	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում /1-ին փողոց բազմաբնակարան շենքի հարևանությամբ/ խաղահրապարակի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	14400000	1	14400,00
45221142	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում (Էներգետիկների 5-րդ և 4-րդ փողոցների միջև) խաղահրապարակի կառուցման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	13563600	1	13563,60
45211137	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրում սպորտային խաղահրապարակի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	12876000	1	12876,00
45221142	Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	39378000	1	39378,00

45221142	Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման լրացուցիչ աշխատանքներ	ՄԱ	դրամ	2523236	1	2523,24
45221142	Վանաձոր համայնքի Վանաձորի պանթեոնում ցանկապատի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	2210444	1	2210,44
45221142	Վանաձոր համայնքի Չուխաջյան 34 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	30189708	1	30189,7
45221142	Վանաձոր համայնքի Շինարարների փողոցի 5/1 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	15747400	1	15747,4
45221142	Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 56,58,60 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	26496900	1	26496,9
45221142	Վանաձոր համայնքի Զորյան փողոցի թիվ 21, Տերյան փողոցի թիվ 14Ա և 14Բ շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	29138229	1	29138,23
45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 55 և 59, Նժդեհի փողոցի թիվ 7 շենքենրի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	37047700	1	37047,7
	Աշխատանքներ/հոդված 5113/					
45221142	Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղ., Մեքենաշինարարների 54 և 61 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	30272337	1	30272,337

45221142	Վանաձոր համայնքի Բելառուսների 36-39,41,42Ա,42Բ բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	27321599	1	27321,599
45221142	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց թիվ 7բազմաբնակարան շենքի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	22576282	1	22576,282
45221142	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 49բազմաբնակարան շենքի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	17493753	1	17493,753
45221142	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 39/1 բազմաբնակարան շենքի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	23863671	1	23863,671
	Ծառայություններ/հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	291000	1	291,00
98111140	ՀՀ Լոռու մարզի, Վանաձոր համայնք, Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	251348	1	251,348
71351540	Վանաձոր համայնքի Չուխաջյան 34 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	603780	1	603,78
	Ծառայություններ/հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնքի Շինարարների փողից 5/1 բակի հիմնանորոգման տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	*դրամ*	*314900*	*1*	*314,9*

71351540	Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 56,58,60 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	*դրամ*	*529900*	*1*	*529,9*
71351540	Վանաձոր համայնքի Զորյան փողոցի թիվ 21, Տերյան փողոցի թիվ 14Ա և 14Բ շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներիտեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	582800	1	582,80
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 55 և 59, Նժդեհի փողոցի թիվ 7 շենքենրի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	740900	1	740,9
	Ծառայություններ/հոդված 5113/					
71351540	Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղ., Մեքենաշինարարների 54 և 61 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	605446	1	605,446
71351540	Վանաձոր համայնքի Բելառուսների 36-39,41,42Ա,42Բ բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	546432	1	546,432
71351540	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց թիվ 7բազմաբնակարան շենքի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	451525	1	451,525
71351540	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 49բազմաբնակարան շենքի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	349875	1	349,875

71351540	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 39/1 բազմաբնակարան շենքի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	477273	1	477,273
	Ծառայություններ/հոդված 5112/					
98111140	Վանաձոր համայնքի Շինարարների փղփց 5/1 բակի հիմնանորոգման հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	113400	1	113,4
98111140	Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 56,58,60 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	190770	1	190,77
	Ծառայություններ/հոդված 5113/					
98111140	Վանաձոր համայնքի Զորյան փողոցի թիվ 21, Տերյան փողոցի թիվ 14Ա և 14Բ շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	174820	1	174,82
98111140	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 55 և 59, Նժդեհի փողոցի թիվ 7 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	222300	1	222,30
	Աշխատանքներ/հոդված 5113/					
45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պող. թիվ 27 և 29 շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	24235414	1	24235.4
45221142	Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	59435960	1	59435,90

45221142	Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 72 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	14402700	1	14402,70
						176649662,00
45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի 10բ և 12 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	33733913	1	33733,91
45221142	Վանաձոր համայնքի Տիգրանյան 3 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	27130613	1	27130,61
45221142	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 28,29,30 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	61792153	1	61792,15
45221142	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 64,66 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	31489333	1	31489,33
45221142	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց 9 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	22503650	1	22503,65
	Ծառայություններ /հոդված 5113/					
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պող. թիվ 27 և 29 շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	500000	1	500.0
71351540	Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 72 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	288000	1	288,00
						3409409
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի 10բ և 12 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	674678	1	674,678

71351540	Վանաձոր համայնքի Տիգրանյան 3 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	542612	1	542,612
71351540	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 28,29,30 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	1112259	1	1112,259
71351540	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 64,66 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	629787	1	629,787
71351540	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց 9 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	450073	1	450,073
	Աշխատանքներ /հոդված 5113/					
45221142	Վանաձոր համայնքի Գ.Լուսավորիչի թիվ 40 և Գ.Նժդեհի թիվ 1 բազմաբնակարան շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	26079860	1	26079,86
	Ծառայություններ /հոդված 5113/					
71351540	Վանաձոր համայնքի Գ.Լուսավորիչի թիվ 40 և Գ.Նժդեհի թիվ 1 բազմաբնակարան շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	520000	1	520,00
	Աշխատանքներ /հոդված 5113/					
45231220	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ. Համբարձումյան և ՈՒսանողական փողոցների հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքների ձեռքբերում	ՄԱ	դրամ	56198880	1	56198.88

45231220	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ.Համբարձումյան և Ուսանողական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում /պետության մասնաբաժին/	ԲՄ	դրամ	252903600	1	252903,6
	Ծառայություններ /հոդված 5113/					
71351540	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ.Համբարձումյան և Ուսանողական փողոցների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում /պետության մասնաբաժին/	ԳՀ	դրամ	990000	1	990,0
98111140	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ.Համբարձումյան և Ուսանողական փողոցների հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում /պետության մասնաբաժին/	ՄԱ	դրամ	1694700	1	1694,7
	Աշխատանքներ /հոդված 5112/					
45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի թիվ 40,42 և 44 շենքների բակի կապիտալ նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	38657200	1	38657,20
	Ծառայություններ /հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի թիվ 40,42 և 44 շենքների բակի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	դրամ	752400	1	752,40
	Բաժին -08 խումբ -1 դաս-1 Հանգստի և սպորտի ծառայություններ					
	Սպորտային միջոցառումներ/հոդված 4239/					
92621110	Սպորտային միջոցառումների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	11315000	1	11315,00
92621110	Սպորտային միջոցառումների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	12270400	1	12270,40
	Բաժին -08 խումբ -4 դաս-1 Երիտասարդական ծրագրեր					

	Ծառայություններ /հոդված 4239/					
79951100	Վանաձոր համայնքի կարիքների համար 2026 թվականի «Կանաչ էներգիա կայուն Վանաձոր» ծրագրի շրջանակներում կայուն էներգիայի օրերի կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	ԷԱճ	դրամ	1494300	1	1494,30
	Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգստի, մշակույթ և կրոն					
	մշակութային միջոցառումներ/հոդված 4239/					
79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ԷԱճ	դրամ	9508700	1	9508,7
79951110	<<Վանաձորի օր>> ավանդական համաքաղաքային միջոցառման կազմակերպման ծառայություններ	ԷԱճ	դրամ	9750000	1	9750,00
	ծառայություն/4239/					
79951100	<<Լավ էլի>> խմբի 30-ամյակին նվիրված համերգի կազմակերպում	ՄԱ	դրամ	980000	1	980,00
	Բաժին -09 խումբ-01 դաս-01					
	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզ հասցեում նոր մասնաշենքի կառուցում **(սուբվենցիոն ծրագիր)**					
	Ծառայություն /հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների տեխնիկական ծառայություն (համայնքի մասնաբաժին)	ԳՀ	դրամ	745800	1	745.8
98111140	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	*	1	*
98111140	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	1235000	1	1235.0

	Աշխատանք /հոդված 5112/					
45211228	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ (համայնքի մասնաբաժին)	ԲՄ	դրամ	57924000	1	57924.0
45211228	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման/2-րդ փուլ, ավարտում/ լրացուցիչ աշխատանքների ձեռքբերում	ՄԱ	դրամ	1703040	1	1703.04
	Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգիստ, մշակույթ և կրոն					
	մշակութային միջոցառումներ/հոդված 4239/					
79411210	գնումների գործավարական գործընթացի կազմակերպման ծառայություններ	ՄԱ	դրամ	600000	1	600,0
79951100	միջոցառումների հետ կապված ծառայություններ	ԷԱՃ	դրամ	11570000	1	11570,0
79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ՄԱ	դրամ	24800000	1	24800,0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում «Ջիպսի Քինքս» երաժշտական խմբի մասնակցություն	ՄԱ	դրամ	16000000	1	16000,0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում «Կարապետյաններ Բենդ» երաժշտական խմբի մասնակցություն	ՄԱ	դրամ	6000000	1	6000.0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում երգչուհի Իվետա Մուկուչյանի մասնակցություն	ՄԱ	դրամ	4400000	1	4400,0

79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում հաղորդավար Ռաֆայել Երանոսյանի մասնակցություն	ՄԱ	դրամ	1665000	1	1665,0

*համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի

Գնումների բաժնի պետ՝ **Դավիթ Հակոբյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1839

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1129 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Վրույրի Ջուլհակյանի (ծնված՝ 24/05/1955թ.) լիազորված անձ՝ Լուսինե Խաչատուրի Սարգսյանի 02.09.2026 թվականի թիվ 02/13610 դիմումը, 20.02.2026 թվականին տրված թիվ 819 (Նոտարական ակտի կոդ: 741-20260220-90-9835309) լիազորագիրը, 10 հունիսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1129 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 06.07.2026 թվականին տրամադրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-06072026-06-0166 որոշումը և «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 28.08.2026 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2026TSG7SN) տեղեկանքը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 10 հունիսի 2026 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Լոռվա փողոց թիվ 28 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Անահիտ Վրույրի Ջուլհակյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1129 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման հավելվածը փոխել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1840

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1646 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Արսենի Իսրայելյանի դիմումը, 14 սեպտեմբերի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1646 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 14 սեպտեմբերի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բուլղարական թաղամաս 2-րդ ավան թիվ 114 (պայմանական) հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Արսեն Միշայի Իսրայելյանի և Վիոլետտա Վաղինակի Վարդանյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1646 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում «(ծնված՝ 13.05.2026թ.)» բառերը փոխարինել «(ծնված՝ 12.03.1965թ.)» բառերով :

2. Որոշման 1-ին կետում «0.012923հա» բառերը փոխարինել«0.014248հա» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1841

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԻԶԱՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԴՐԱՆԻԿ ԺՈՐԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Ժորայի Կարապետյանի (ծնված՝ 30.08.1982թ.) 20.07.2026 թվականի թիվ 02/10964 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 23.06.2026 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3902 վկայագիրը(Նոտարական ակտի կոդ: 763-20260622-84-10219793), 23.06.2026 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3904 վկայագիրը(Նոտարական ակտի կոդ: 763-20260622-84-10219784), 26.07.1993 թվականի անհատական բնակելի տան սեփականության վկայագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 14.09.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-233/26Ի եզրակացությունը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց թիվ 26 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 378.0քմ և նրան կից 146.8քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-2025թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 524.8քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1.Ճանաչել Անդրանիկ Ժորայի Կարապետյանի (ծնված՝ 30.08.1982թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոց թիվ 52 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 378.0քմ մակերեսով հողամասին կից 146.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Անդրանիկ Ժորայի Կարապետյանի (ծնված՝ 30.08.1982թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոց թիվ 52 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 524.8քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ. բացառությամբ՝ 2025թվականին կառուցված 13.22քմ մակերեսով շվաքարանի:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նիզամի փողոց, 26 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1842

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 7Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրանտ Խաչատուրի Հարությունյանի 22.09.2026 թվականի թիվ 02/14784 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1232167 վկայականը, 17.09.2026թ. թիվ 5546 իրավունք սահմանող փաստաթուղթը Հրանտիկ Խաչատուրի Հարությունյանին պատկանելու փաստը հաստատելու մասին նոտարական ակտը (նոտարական ակտի կոդ՝ 741-20260722-216-10332569), 17.09.2026թ. թիվ 5547 սեփականության իրավունքի վկայագիրը (նոտարական ակտի կոդ՝ 741-20260915-84-10551685), համաձայն որի՝ 1/2 (մեկ երկրորդ) մասով գույքի համասեփականատեր է հանդիսանում Ռայա Արամի Հարությունյանը, 17.09.2026թ. թիվ 5548 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը (նոտարական ակտի կոդ՝ 741-20260915-84-10551680), համաձայն որի՝ 1/2 (մեկ երկրորդ) մասով գույքի համասեփականատեր է հանդիսանալու Հրանտ Խաչատուրի Հարությունյանը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց թիվ 7գ հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Ուսանողական փողոց, 7/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1843

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՄԱՅԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 971 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանիկ Արտաշեսի Գասոյանի 07.09.2026թ. թիվ 02/13909 դիմումը և 07.09.2026թ.. Վանաձոր համայնքի ղեկավարի 14 մայիսի 2026 թվականի թիվ 971 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 14 մայիսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր Տարոն-4 թաղամաս Մեքենաշինարարների թաղամաս 53-3/6 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 971 որոշումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1844

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌՈԲԵՐՏ ԲԱՐԵՂԱՄԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ՌԱՖԻԿ ԲԱՐԵՂԱՄԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԵՎ ՌԱԶՄԻԿ ԲԱՐԵՂԱՄԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Բարեղամի Մուրադյանի և Ռաֆիկ Բարեղամի Մուրադյանի լիազորված անձ՝ Արփինե Ռաֆիկի Մուրադյանի և Ռազմիկ Բարեղամի Մուրադյանի 30.09.2026 թվականի թիվ 02/15389 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 06.08.2026 թվականի թիվ 6831 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ՝ 763-20260915-67-10546368), 04.08.2026 թվականի թիվ 4985 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ՝ 594-20260831-67-10486334), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23062026-06-0049 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և շինությունների բնութագիրը, 24.09.2026 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026ZBNST3, 2026XCWLDD, 2026JTTLDY), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝**որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց 78 հասցեում գտնվող Ռոբերտ Բարեղամի Մուրադյանին, Ռաֆիկ Բարեղամի Մուրադյանին և Ռազմիկ Բարեղամի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1, 2 և 3 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց 78 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. Ռոբերտ Բարեղամի Մուրադյանին պատկանող 264.19քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նար-Դոսի փողոց, 78 բնակելի տուն:

բ. Ռաֆիկ Բարեղամի Մուրադյանին պատկանող 205.85քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նար-Դոսի փողոց, 78/1 բնակելի տուն:

գ. Ռազմիկ Բարեղամի Մուրադյանին պատկանող 163.79քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նար-Դոսի փողոց, 78/2 բնակելի տուն:

0.055854հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող 60.49քմ մակերեսով ավտոտնակը և 4.71քմ մակերեսով հավանոցը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն Ռոբերտ Բարեղամի Մուրադյանի, Ռաֆիկ Բարեղամի Մուրադյանի և Ռազմիկ Բարեղամի Մուրադյանի միջև հավասար բաժիններով, յուրաքանչյուրին 1/3 մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1845

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 29/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Ռուբենի Ղարիբյանի 23.09.2026 թվականի թիվ 02/14857 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05062019-06-0063 վկայականը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 29/1 հասցեում գտնվող Արմինե Ռուբենի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 29/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 80.84քմ ընդհանուր մակերեսով շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 29/3 խանութ:

բ. 92.11քմ ընդհանուր մակերեսով շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 29/4 բնակելի տուն:

100.0քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ առանձնացվող 2 միավոր անշարժ գույքերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1846

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 61/2 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Սուրենի Կարապետյանի (ծնված՝ 05.04.1961թ.) լիազորված անձ՝ Զորիկ Վարդանի Կարապետյանի 19.06.2026 թվականի թիվ 02/9262 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 04.06.2026 թվականի թիվ 3190 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260609-67-10173450), 29.09.2026 թվականի թիվ 5803 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260925-66-10590948), 29.09.2026 թվականի թիվ 5805 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260925-66-10588839), 29.09.2026 թվականի թիվ 5804 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260925-66-10591003), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 28.09.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-250/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց թիվ 61/2 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.024415հա մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1991-1995թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.024415հա:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝

որոշում եմ.

1.Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց թիվ 61/2 (պայմանական) հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-001-0463-0028-ից) գտնվող 0.000518հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

2.Ճանաչել Կարինե Սուրենի Կարապետյանի (ծնված՝ 05.04.1961թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց թիվ 61/2 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.024415հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 49.53քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների նկատմամբ, բացառությամբ՝ 1992 թվականին ինքնակամ կառուցված 60.95քմ մակերեսով անավարտ բնակելի տան, համաձայն՝ «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ֆիդայիների փողոց, 70/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1847

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱՉԻԿ ՎԱՂԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչիկ Վաղիկի Հակոբյանի 04.08.2026 թվականի թիվ 02/11885 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1984711 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.04.2026 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 202634X3YA), «ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ ԱՇՈՏԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 13.08.2026 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1- 202/26 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Կամոյի փողոց թիվ 34 հասցեում գտնվող Հրաչիկ Վաղիկի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 6.2քմ մակերեսով աստիճանահարթակը, 143.2քմ արտաքին ընդհանուր մակերեսով (ներքին մակերեսը՝ 115.90քմ (111.90քմ+4.0քմ)) բնակելի տունը, 2.9քմ մակերեսով (ներքին մակերեսը՝ 1.8քմ) սանհանգույցը, 15.40քմ մակերեսով ծածկը, 6.8քմ ընդհանուր մակերեսով պարիսպները (5.30քմ+0.10քմ+1.40քմ) և կատարված թվով 1 ինքնակամ ձևափոխումները:

2. Հրաչիկ Վաղիկի Հակոբյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 174.5քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 343600 (երեք հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ և թվով 1 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 1969 (հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ

դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1848

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1487 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Իշխան Ավետյանի 23.09.2026 թվականի թիվ 02/14851 դիմումը,Վանաձորի համայնքի ղեկավարի 26 հունիսի 2025 թվականի թիվ 1487 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 26 հունիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում (նախկինում՝ Մեղրուտ փողոց 6, տուն 86 և 86Ա) գտնվող բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Իշխան Ավետյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1487 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1849

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1475 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Սամսոնի Անտոնովայի լիազորված անձ՝ Լալի Լևանի Խաչատուրյանի 01.10.2026 թվականի թիվ 02/15451 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման նոր քաղվածքը, 26.06.2026 թվականի թիվ 6118 լիազորագիրը, 06 օգոստոսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1475 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կոմից 01.09.2026 թվականին տրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ թիվ ՍՏ-01092026-06-1023 տեղեկանքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 708741 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 օգոստոսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, գյուղ Դարպասում (կադաստրային ծածկագիր՝ 06-033-0030-0004) գտնվող տնամերձին փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1475 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման նախաբանում «Լալի Լևանի Խաչատուրյանի՝ ով նաև հանդիսանում է Ալվարդ Սամսոնի Անտոնովայի լիազորված անձը» բառերը փոխարինել «Ալվարդ Սամսոնի Անտոնովայի լիազորված անձ՝ Լալի Լևանի Խաչատուրյանի» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 1850

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՌՎԱ ԽՃՈՒՂԻ 14-2/1 (ԿԱԴ. ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-001-1207-0035) ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի լիազորված անձ՝ Ալեն Մարտինի Սահակյանի (ծնված՝ 28.12.1988թ.) 19.08.2026թ. թիվ 02/12722 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14012022-06-0044 վկայականը, 19.08.2026 թվականին «Ա.Ա.Բ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից տրված լիազորագիրը, Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթուղթը, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի թիվ 7-Լ որոշումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Համապատասխանեցնել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի 14-2/1 (ծածկագիր՝ 06-001-1207-0035) հողամաս հասցեում գտնվող սեփականության իրավունքով պատկանող 1.35183հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

2. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և ենթակա է գրանցման որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1851

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ, 47/32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՎԵՏԼԱՆԱ ՍՊԱՐՏԱԿԻ ՎԱՀԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1416 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Սպարտակի Վահանյանի 30.09.2026 թ. թիվ 02/15392 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24072026-06-0105 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց, 47/32 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 24.00քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 22.24քմ) ավտոտնակը 90510 (իննսուն հազար հինգ հարյուր տասը) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.8քմ մակերեսով հողամասը 517690 (հինգ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սվետլանա Սպարտակի Վահանյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սվետլանա Սպարտակի Վահանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի, և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 03 օգոստոսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 47/32 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը, և դրանով զբաղեցված հողամասը Սվետլանա Սպարտակի Վահանյանին օտարելու մասին» թիվ 1416 որոշումը :

4. Սվետլանա Սպարտակի Վահանյանի օտարման համար սահմանված վճարը՝ 517690 (հինգ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամ, 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ և 90510 (իննսուն հազար հինգ հարյուր տասը) ՀՀ դրամ գումարները վերադարձնել 11810008447400 հաշվեհամարին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1852

«ԲՈՒ» ԼԵՌՆԱՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՊԱՐԿ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված արձանագրության, զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154.2.-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված զեկուցագրի համաձայն՝ «Բու» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ-ի կոմից առանց շահագործման թույլտվության և ավարտական ակտի,շահագործում է քաղաք Վանաձոր Մյասնիկյան 90/2-3 և 76/6-5/2 հասցեներում գտնվող սրճարանը:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2026 թվականի հոկտեմբերի 06-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին պատշաճ ծանուցվել է «Բու» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ տնօրեն Էմմա Պետրոսյանը (հիմք՝ փոստային առաքման հետադարձ կտրոն թիվ AL0135741906AM), ով ներկայանալով վարչական վարույթի լսումներին հայտնել է, որ չի հասցրել ծանոթանալ վարչական վարույթի հիմք հանդիսացած փաստաթղթերին և խնդրել է վարույթի լսումները հետաձգել հոկտեմբերի 19-ին ժամը 11:00-ին: Լսման իրավունքը պահելու նպատակով կրկին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ 19 հոկտեմբերի 2026 թվականին, որին «Բու» լեռնահեծանվային պարկ

զբոսաշրջության զարգացման ՀԿ տնօրեն Էմմա Պետրոսյանը պատշաճ ծանուցվել (հիմք՝ փոստային առաքման հետադարձ կտրոն թիվ AL0135872849AM), սակայն չի ներկայացել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154.2.-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարությունն ավարտված շենքերը կամ շինություններն առանց շահագործման թույլտվության ձևակերպման շահագործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219՝-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154.2.-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154.2.-րդ, 219՝-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.«Բու» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ-ի տնօրեն Էմմա Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154.2.-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Պարտավորեցնել «ԲՈՒ» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման հասարակական կազմակերպության տնօրեն Էմմա Պետրոսյանին տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1853

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-031-0048-0023) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Սարգսի Հարությունյանի դիմումը, 05.05.1991թ. տրված տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, և հաշվի առնելով այն, որ գյուղ Գուգարքում (կադաստրային ծածկագիր՝ 06-031-0048-0023) գտնվող 0.081142հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի2-րդ, 8-րդ և 16-րդ մասով, ՀՀ կառավարության 31.12.1998թ.-ի թիվ 867 որոշման կարգի 3-րդ և 17-րդ կետերով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Դավիթ Սարգսի Հարությունյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում (կադաստրային ծածկագիր՝ 06-031-0048-0023) գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, 0.081142հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 12-րդ փողոց, 3/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1854

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՄԱՐԳԵՎԻՉԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Մարգևիչի Չոբանյանի (ծնված՝ 22.05.1961թ.) լիազորված անձ՝ Մուրադ Աշոտի Չոբանյանի 11.06.2026 թվականի թիվ 02/8850 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 27.03.2026 թվականի թիվ 2860 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը: 763-20260505-67-10057637), 10.02.1987 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 19.08.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-206/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 30 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 535.6քմ և նրան կից 57.0քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1987-1999թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 592.6քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Աշոտ Մարգևիչի Չոբանյանի (ծնված՝ 22.05.1961թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 30 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 535.6քմ մակերեսով հողամասին կից 57.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Աշոտ Մարգևիչի Չոբանյանի (ծնված՝ 22.05.1961թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 30 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 592.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող 284.52քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների նկատմամբ, համաձայն՝ «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Լազյան փողոց, 30 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1855

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 21/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐԵՏԱ ԷԴԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրետա Էդիկի Ոսկանյանի 31.08.2026 թվականի թիվ 02/2237 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08042025-06-0018 վկայականը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 19.08.2026 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026U4AYJ2),ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, որոշում եմ.

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք գյուղ Գուգարք 4-րդ փողոց, 21/3 հասցեում գտնվող Գրետա Էդիկի Ոսկանյանին, սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 102.5քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Գրետա Էդիկի Ոսկանյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 102.5քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 145755 (մեկ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր հիսունհինգ) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1856

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ (ՆԱԽԿԻՆ ԿԱԼԻՆԻՆԻ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 65 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵԴԱ ՈՍԿԱՆԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ՍԵՅՐԱՆ ԱՇՈՏԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՄՎԵԼԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեդա Ոսկանի Ամիրխանյանի (ծնված՝ 21.11.1949թ.), Սեյրան Աշոտի Ամիրխանյանի (ծնված՝ 24.09.1951թ.) և Մարգարիտա Սամվելի Ամիրխանյանի (ծնված՝ 31.10.1983թ.) 03.07.2026 թվականի թիվ 02/10064 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 30.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2093 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20250228-84-8797036), 30.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2094 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20250430-84-8968281), 28.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2029 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20250228-84-8798875), 05.08.20206 թվականի հայտարարությունը, 28.04.1989 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, 06.08.2026թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-182/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի) փողոց թիվ 65 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 182.0քմ և դրան կից 101.5քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1956-1991թթ, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 567.0քմ, որը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ Սեդա Ոսկանի Ամիրխանյանի, Սեյրան Աշոտի Ամիրխանյանի և Մարգարիտա Սամվելի Ամիրխանյանի (հասցեն՝ Ֆիդայիների (նախկին Կալինինի) թիվ 65) և Աշոտ Սեյրանի Ամիրխանյանի (հասցեն՝ Ֆիդայիների (նախկին Կալինինի) թիվ 65) տնատիրությունների միջև, հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրին 1/2 մասով (567.0քմ: 2=283.5քմ):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1.Ճանաչել Սեդա Ոսկանի Ամիրխանյանի (ծնված՝ 21.11.1949թ.) (1/2), Սեյրան Աշոտի Ամիրխանյանի (ծնված՝ 24.09.1951թ.) (1/4) և Մարգարիտա Սամվելի Ամիրխանյանի (ծնված՝ 31.10.1983թ.) (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի) փողոց թիվ 65 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 182.0քմ և դրան կից 101.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

567.0քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ Սեդա Ոսկանի Ամիրխանյանի, Սեյրան Աշոտի Ամիրխանյանի և Մարգարիտա Սամվելի Ամիրխանյանի (հասցեն՝ Ֆիդայիների (նախկին Կալինինի) թիվ 65) և Աշոտ Սեյրանի Ամիրխանյանի (հասցեն՝ Ֆիդայիների (նախկին Կալինինի) թիվ 65) տնատիրությունների միջև, հավասար բաժիններով՝ յուրաքանչյուրին 1/2 մասով:

2.Ճանաչել Սեդա Ոսկանի Ամիրխանյանի (ծնված՝ 21.11.1949թ.) (1/2), Սեյրան Աշոտի Ամիրխանյանի (ծնված՝ 24.09.1951թ.) (1/4) և Մարգարիտա Սամվելի Ամիրխանյանի (ծնված՝ 31.10.1983թ.) (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը, Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի) փողոց թիվ 65 հասցեում, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 567.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող 209.97քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների նկատմամբ համաձայն՝ «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ֆիդայիների փողոց, 67/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1857

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՍՈՒՐԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Սուրենի Քոչարյանի (ծնված՝ 20.01.1955թ.) 20.04.2026 թվականի թիվ 02/6034 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 18.01.1988 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, 07.08.2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026WEQDT3), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 14.09.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1- 232/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 2/3 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.00639հա մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960-1990թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.00639հա, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն Սեյրան Սուրենի Քոչարյանի (հասցեն՝ Թումանյան փողոց թիվ 2/3) և Սուսաննա Պապիկյանի (հասցեն՝ Թումանյան փողոց թիվ 2/3) տնատիրությունների միջև հավասար բաժիններով, յուրաքանչյուրին՝ 1/2 մասով:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սեյրան Սուրենի Քոչարյանի (ծնված՝ 20.01.1955թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ

2/3 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0.00639հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 52.6քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

0.00639հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն Սեյրան Սուրենի Քոչարյանի (հասցեն՝ Թումանյան փողոց թիվ 2/3) և Սուսաննա Պապիկյանի (հասցեն՝ Թումանյան փողոց թիվ 2/3) տնատիրությունների միջև հավասար բաժիններով, յուրաքանչյուրին՝ 1/2 մասով:

0.00639հա մակերեսով հողամասից 0.00028հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման նշանակության հողեր գործառնական նշանակության հողամաս:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 2/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1858

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՐԱՖՖՈՒ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԵՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Մարտունի Հակոբյանի 10.08.2026 թվականի թիվ 02/12241 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17042025-06-0035 վկայականը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 13.08.2026 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1- 203/26 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի ա) և դ) ենթակետերով՝ որոշում եմ.

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Րաֆֆու փողոց 13 հասցեում գտնվող Արմեն Մարտունի Հակոբյանին սեփականության, սեփականության, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 36.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 33.10քմ) բնակելի տունը, 38.40քմ մակերեսով բնակելի տունը, 39.6քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 34.1քմ (26.6քմ+7.5քմ)), 24.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.6քմ) լողավազանը, 3.0քմ մակերեսով պարիսպը և թվով 6 ինքնակամ ձևափոխումները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Արմեն Մարտունի Հակոբյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 141.8քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 328410 (երեք հարյուր քսանութ հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ և թվով 6 ինքնակամ ձևափոխումները օրինականացման համար սահմանված վճարը՝ 13900 (տասներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1859

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ, ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ԹԻՎ 19 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ, ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Միերի Բեժանյանի 14.08.2026 թվականի թիվ 02/12502 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1749962 վկայականը, 05.08. 2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը /ծածկագիր:2026NLT5BS /, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը և բնութագիրը և մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի ա) և գ) ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 7 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.09492 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

0.09492 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

2. Ճանաչել օրինական Արմեն Միերի Բեժանյանի սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 7 շենքի ծավալիս դուրս (շենքի սպաս), 19 բնակարանին կից ինքնակամ կառուցած՝ 1.2 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը և բնակարանում կատարված թվով 5 ինքնակամ ձևափոխությունները:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված 1.2 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցած բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը 1358 (հազար երեք հարյուր հիսունութ) ՀՀ դրամ և թվով 5 ինքնակամ ձևափոխությունների օրինականացման համար

սահմանված վճարը՝ 18855 (տասնութ հազար ութ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1860

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 63 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էմիլյա Հենրիկի Գրիգորյանի 14.08.2026 թվականի թիվ 02/12518 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Մեր Գևորգյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 08.10.2026 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026PAE3MZ), 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 63 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.2 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես 20.2քմ) ավտոտնակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի, և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը, հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 63 շենքի հյուսիսային մասում ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 63/6 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1861

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 4/9Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԼԱԼԱ ԱՀԱՐՈՆԻ ԻՍՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լալա Ահարոնի Իսոյանի լիազորված անձ Կարինե Շիլլերի Թորոսյանի 14.10.2026 թվականի թիվ 16216 դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 13.05.2024թ. թիվ 31 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 08.09.2025թ. թիվ 5017 (նոտարական ակտի կոդ: 843-20250908-90-9367151) լիազորագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1094650 վկայականը, 03.09.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4874 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20250827-84-9332123), 11.04.2005 թվականի Վանաձորի քաղաքապետի թիվ 667 որոշումը, 13.04.2005 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 3921 պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս թիվ 4/9գ հասցեում գտնվող, Լալա Ահարոնի Իսոյանի սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած 21.0 քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 143530 (հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամով, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լալա Ահարոնի Իսոյանի:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Լալա Ահարոնի Իսոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 21.0 քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3.Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս թիվ 4/9գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք. Հ. Ներսիսյան թաղամաս, 4/3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1862

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ, ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ԹԻՎ 18 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղեցիկ Ռաֆիկի Համբոյանի, Մելանյա Ռոբերտի Համբարյանի և Արտավազդ Ռոբերտի Համբարյանի 27.04.2026 թվականի 02/6365 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 28102015-06-0034 վկայականը, սեփականատերերի հայտարարությունները, 08.04.2026թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026MHNJGV), «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, եզրակացությունը, 14.05.2026թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 110/26 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի ա) և գ) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Գեղեցիկ Ռաֆիկի Համբոյանին (1/2), Մելանյա Ռոբերտի Համբարյանին (1/4) և Արտավազդ Ռոբերտի Համբարյանին (1/4) սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի թիվ 5 շենքի ծավալից դուրս(շենքի սպաս), թիվ 18 բնակարանին կից ինքնակամ կառուցած՝ 18.55քմ ընդհանուր արտաքին (ներքին՝ 14.11) մակերեսով բնակարանը և բնակարանում կատարված թվով 2 ինքնակամ ձևափոխումները:

2 . Սույն որոշման 1-ին կետում նշված 18.55քմ ընդհանուր արտաքին(ներքին՝ 14.11) մակերեսով ինքնակամ կառուցած բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը 10960 (տասը հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և թվով 2 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 3940 (երեք հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի թիվ 5 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.08423 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

0.08423 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1863

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ, ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ԹԻՎ 25 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սերյոժայի Առաքելյանի 29.07.2026 թվականի 02/11549 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 643806 վկայականը, 13.08.2026 թվականի «ՈՒսանողական» համատիրությունների կողմից տրված արձանագրությունը, սեփականատերերի հայտարարությունները, 28.07.2026թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026GLJVWX), «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, եզրակացությունը, 10.08.2026թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 191/26 Ի եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի ա) և գ) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել օրինական Արմեն Սերյոժայի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 9 շենքի ծավալից դուրս(շենքի սպաս), թիվ 25 բնակարանին կից ինքնակամ կառուցած՝ 9.01քմ արտաքին(ներքին՝ 8.13քմ) ընդհանուր մակերեսով բնակարանը և բնակարանում կատարված թվով 1 ինքնակամ ձևափոխումները:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 9.01քմ արտաքին (ներքին՝ 8.13քմ) մակերեսով ինքնակամ կառուցած բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը 5320 (հինգ հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ և թվով 1 ինքնակամ ձևափոխման օրինականացման համար սահմանված վճարը՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 9 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.11903 հա

մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

0.11903 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1864

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ 1-32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Էդիկի Մոսինյանի 22.12.2023թ. թիվ 02/23003 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14062023-06-0041 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 13.10.2026 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 33/26ա եզրակացությունը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ -ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 22.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023TPR2RZ), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի սեփականություն ճանաչված Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս 1-32 հասցեում գտնվող ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.8քմ մակերեսով հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.7քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ընդհանուր ներքին մակերես 20.1քմ) ավտոտնակը ճանաչել համայնքի սեփականություն:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Համապատասխանեցնել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս 1-32 հասցեում (հողամասի ծածկագիր՝ 06-001-0740-0069) գտնվող, 0.00198 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողեր, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Ներսիսյան թաղամաս 1-32 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Հ. Ներսիսյան թաղամաս, 2/4 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 1865

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 186 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 30-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 186 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿ ՀՅՈՒՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

Հավելված
Հաստատում եմ
Վանաձոր համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝
Ա. Փելեշյան
Թիվ 1865 որոշում
«22» հոկտեմբերի 2026թ.

Պատվիրատու Վանաձոր համայնք

Անվանումը 2026թ. Գնումների պլանի լրացում 56

Ֆինանսավորման աղբյուրը Վանաձոր համայնքի 2026թ. բյուջե

Միջանցիկ կոդը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանումը	Գնման ձևը (ընթացակարգը)	Չափման միավորը	Միավորի գինը	Քանակը	Գումարը (հազար) դրամ
1	2	3	4	5	6	7
	Բաժին-01 խումբ-1 դաս-1 Աշխատակազմի պահպանման ծախսեր					
	Էներգետիկ ծառայություններ /Հոդված-4212/					
65311100	Էներգետիկ ծառայություններ/էլ. էներգիա/	ՄԱ	կվտ/ժամ	49.8	508613.797	25328 967
65211100	Գազի մատակարարման ծառայություններ	ՄԱ	խմ	144	78001.057	11232.152
	Կոմունալ ծառայություններ/Հոդված-4213/					
65111100	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	ՄԱ	խմ	200	95913.185	19182.637
50321700	Վանաձոր համայնքում դեռատիզացիոն և դեզինֆեկցիոն ծառայություններ	ՄԱ	դրամ	600000	1	600.00
	Կապի ծառայություններ/հոդված 4214/					
72411100	Վանաձոր համայնքի 2026թ. կարիքների համար ինտերնետ կապի ծառայությունների ձեռքբերում	ՄԱ	դրամ	*	1	*
72411100	Վանաձոր համայնքի 2026թ. կարիքների համար ինտերնետ կապի ծառայությունների ձեռքբերում	ՄԱ	դրամ	902000	1	902.00
	Վարչական ծառայություններ/հոդված 4231/					
79531100	Գրավոր թարգմանության ծառայություններ	ՄԱ	դրամ	950000	1	950.00
	Ծառայություններ /հոդված 4231/					
79821170	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար այլ տպագրական ծառայություններ	ՄԱ	դրամ	957474	1	957.47

98391200	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ընդհանուր բնույթի այլ վարչական ծառայություններ	ՄԱ	դրամ	905510	1	905.51
	Համակարգչային ծառայություններ/հոդված 4232/					
72261180	Վանաձորի համայնքապետարանի 2026թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	480000	1	480.00
72261180	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	480000	1	480.00
	Կառավարչական ծառայություններ /հոդված 4235/					
79211150	Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով աուդիտորական ծառայություններ	ԳՀ	դրամ	1788000	1	1788.0
	ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /հոդված 4239/					
72611100	Վանաձորի համայնքապետարանի 2026թ. կարիքների համար համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություններ	ՄԱ	դրամ	984930	1	984.93
92511110	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար փաստաթղթերի արխիվացման ծառայություններ	ՄԱ	դրամ	990900	1	990.90
	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում /հոդված 4252/					
50311120	Վանաձորի համայնքապետարանի 2026 թվականի կարիքների համար համակարգչային տեխնիկայի վերանորոգման և պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ	994000	1	994.00
	Ապրանքներ / հոդված 4252/					
34921190	Անցակետային հսկողության սարք	ՄԱ	հատ	980000	1	980.00
	Գրասենյակային ապրանքներ և նյութեր/հոդված 4261/					
30234640	Հիշողության կրիչ 1	ԷԱՃ	հատ	3500	10	35000
30192133	Սրիչ	ԷԱՃ	հատ	250	80	20000
30197220	Ամրակ 1	ԷԱՃ	հատ	2.5	5600	14000

30192121	Գրիչ 1	ԷԱՃ	հատ	600	120	72000
30192121	Գրիչ 2	ԷԱՃ	հատ	90	1600	144000
30192700	Գրառումների գիրք	ԷԱՃ	հատ	2500	30	75000
30197230	Թղթապանակ 7	ԷԱՃ	հատ	1000	100	100000
30197622	Թուղթ	ԷԱՃ	կգ	800	6800	5440000
35821400	ՀՀ ազգային դրոշ	ԷԱՃ	հատ	9000	40	360000
30192780	Էջանիշ	ԷԱՃ	հատ	200	200	40000
30197322	Կարիչ 1	ԷԱՃ	հատ	1500	20	30000
30197322	Կարիչ 2	ԷԱՃ	հատ	1500	20	30000
30197112	Կարիչի ասեղ 1	ԷԱՃ	տուփ	130	120	15600
30197100	Կարիչի ասեղ 2	ԷԱՃ	տուփ	150	120	18000
30192130	Մատիտ	ԷԱՃ	հատ	120	100	12000
22811150	Նոթատետր 2	ԷԱՃ	հատ	2500	30	75000
30199420	Նշումների թուղթ կպչուն 1	ԷԱՃ	հատ	200	400	80000
30199430	Նշումների թուղթ 2	ԷԱՃ	հատ	1200	100	120000
30192114	Շտամպի բարձիկի ֆանաք	ԷԱՃ	հատ	400	10	4000
30192160	Ջնջիչ	ԷԱՃ	հատ	190	60	11400
30192700	Սոսինձ չոր	ԷԱՃ	հատ	350	50	17500
39263510	Սեղմակ 1	ԷԱՃ	հատ	10	960	9600
39263520	Սեղմակ 2	ԷԱՃ	հատ	11.7	1800	21060
39263520	Սեղմակ 3	ԷԱՃ	հատ	14.2	3600	51120
39263520	Սեղմակ 5	ԷԱՃ	հատ	29.2	1800	52560
39263520	Սեղմակ 6	ԷԱՃ	հատ	47.5	1200	57000
30192100	Ռետին	ԷԱՃ	հատ	100	100	10000
39292530	Քանոն 1	ԷԱՃ	հատ	290	80	23200
30197231	Ֆայլ	ԷԱՃ	հատ	2000	70	140000
30197233	Թղթապանակ 1	ԷԱՃ	հատ	40	100	4000
						7082040
	Այլ նպատակային էլութեր, այդ թվում՝ /հոդված 4269/					***988.80***
42131490	ՍիՏոն	ՄԱ	հատ	1200	12	14.40

44221141	Բռնակ/եվրո դռան/	ՄԱ	հատ	2500	25	62.50
44511390	Բռնակ/եվրո պատուհանի/	ՄԱ	հատ	1000	25	25.00
44221141	Բռնակ/տայտի դռան/	ՄԱ	հատ	5000	6	30.00
33141120	Սիլիկոնի սեղմիչ	ՄԱ	հատ	2000	2	4.00
44551100	Զսպանակ դռան	ՄԱ	հատ	14000	3	42.00
44521100	Փակ,ան մեծ	ՄԱ	հատ	3500	30	105.00
44521100	Փական	ՄԱ	հատ	1400	25	35.00
42131410	Միջուկ փականի	ՄԱ	հատ	2200	45	99.00
42131100	Ջրի փական	ՄԱ	հատ	2500	12	30.00
44411100	Ծորակ 1 տեղանոց	ՄԱ	հատ	6000	8	48.00
44411751	Զուգարանակոնքի ջրի բաքի միջուկ	ՄԱ	հատ	2000	10	20.00
31684400	Էլ. վարդակ	ՄԱ	հատ	650	46	29.90
31211221	Էլ. անջատիչ	ՄԱ	հատ	750	46	34.50
31685000	Երկարացման լար 5մ 3 հատանոց	ՄԱ	հատ	2000	10	20.00
31685000	Երկարացման լար 3մ 3 հատանոց	ՄԱ	հատ	1500	8	12.00
31531300	Լամպ LED մեծ	ՄԱ	հատ	1000	150	150.00
31531300	Լամպ LED փոքր	ՄԱ	հատ	800	60	48.00
31531210	Լամպ 100Վ	ՄԱ	հատ	100	400	40.00
31531600	Լամպ ցերեկային 120սմ	ՄԱ	հատ	350	70	24.50
31531600	Լամպ կարճ 120սմ	ՄԱ	հատ	300	50	15.00
31681100	Պլատա երկար	ՄԱ	հատ	400	20	8.00
31681100	Պլատա կարճ	ՄԱ	հատ	300	20	6.00
31531710	Դրոսել	ՄԱ	հատ	300	20	6.00
31651400	Մեկուսիչ ժապավեն	ՄԱ	հատ	200	50	10.00
18141100	Բանվորական ձեռնոց	ՄԱ	զույգ	200	350	70.00
	Տրանսպորտային նյութեր, այդ թվում՝					
	Վառելիք/հոդված-4264/					
9132200	*բենզին ռեգուլյար*	*ԷԱՃ*	լիտր	430	10317	4436.31
9411710	*սեղմված բնական գազ*	*ԷԱՃ*	կգ	273.9998	5216	1429.183
	ապրանքներ/հոդված-4267/					752.72
41111100	խմելու ջուր/19 լ տարայով/	ՄԱ	լիտր	100	2280	228.0

39221350	միանգամյա օգտագործման բաժակ	ՄԱ	հատ	15	10000	150.0
39221350	միանգամյա օգտագործման բաժակ/թղթյա/	ՄԱ	հատ	20	4000	80.0
41111100	խմելու ջուր/պլաստիկ 22ով/	ՄԱ	լիտր	250	180	45.0
15981200	հանքային ջուր/պլաստիկ 22ով/	ՄԱ	լիտր	330	204	67.32
41111100	խմելու ջուր/ապակե տարայով/	ՄԱ	լիտր	340	160	54.4
15981200	հանքային ջուր/ապակե տարայով/	ՄԱ	լիտր	400	320	128.0
	Ապրանքներ/հոդված-4269/					
	Կաթսայատան համար ապրանքների ձեռքբերում					***562.75***
31221600	Շարժիչ	ՄԱ	հատ	200000	1	200.00
44111448	Ջերմամեկուսիչ	ՄԱ	հատ	7000	8	56.00
42161400	Օդհանիչ	ՄԱ	հատ	3800	30	114.00
44111413	Յուղաներկ	ՄԱ	կգ	4500	5	22.50
44163121	Խողովակ 1	ՄԱ	մ	12000	5	60.00
31331120	Մալուխ	ՄԱ	մ	2800	30	84.00
31221281	Պենոպլաստ	ՄԱ	հատ	1200	5	6.00
44163140	Խողովակ 2	ՄԱ	մ	850	5	4.25
44112252	իզոգամ	ՄԱ	քմ	1600	10	16.00
	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ավտոպահես յամասերի ձեռքբերում և փոխարինում					5029.25
50111130	Տոյոտա Քամրի ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում	ԳՀ	դրամ	1000000	1	1000 00
50111130	Մերսեդես Բենց E 200 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում	ԳՀ	դրամ	700000	1	700.00
50111130	ՎԱԶ 21214 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում	ԳՀ	դրամ	829250	1	829.25
50111130	ՋԻԼ-130 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում	ԳՀ	դրամ	1250000	1	1250.00

